«Օլքիի ուղղութեամբ սեպտ. 9–ին, ժամը 14–ին, թիւրքերը Ենղանօթային կրակ բացին առին Վօսկուտա սարի վրա. մեր հրետանին պատասխան տուեց: Սեպտ. 10–ի գիշերը հակառակորդի մի մեծ խումբ մօտեցաւ 5005 բարձրութեան վրա և Ղարադաշ գիւղից երկու վերստի վրա գտնուղ մեր պահակախմբերին, բայց հրետանիի և գնդացիրային կրակով յետ չպրտուեց: Սեպտ. 10–ին, առաւ. ժամը 8–ին թիւրքական երկու սաւառնակները թռիչք գործեցին Սարըղամիշի ճակատի երկարութեամբ, և միաժամանակ թիւրքերը Բարդուսի մօտ Ենղանօթային կրակ բացին մեր դիրքերի վրա: Մեր հրետանին պատասխանում էր: Նոյն օրը ժամը 15–ին կրկին երևացին թշնամու երկու սաւառնակներ. թիւրքերը հրացաններով կրակում էին մեր խրամատների ուղղութեամբ Քիրօղլի Բաշ սարի վրա:

Սեպտ. 9–ին, ժամը 18 և 45 րոպէին, երկու օրւայ կռիւներից յետոյ, մերոնք գրաւեցին Կողր գիւղը և աղահանքերը: Առնւած է մի լեռնային Ենղանօթ, երկու հետախոսային գործիք և այլ ռազմական աւար: Մեր կորուստները աննշան են: Փիլրու գիւղի մօտ, թշնամու հակագրոհը յետ վանելու ժամանակ, սպանւած է Սասունի ճիւաղ խմբերի պետ Մանուկը»:

Սեպտ. 13–ին թիւրքական խոշոր ուժեր, անսպասելի կերպով, յարձակեցին Սարըղամիշի հայ զօրամասի ձախ թևի վրա, ճեղքեցին ճակատը և գրաւեցին Գրդ մարտկոցի երկու լեռնային Ենղանօթները: Տեղի ունեցաւ կատաղի կռիւ հայկական Գրդ գնդի և թիւրքերի մէջև, ուր առանձին յամառութիւն ու քաջութիւն ցոյց տուեց տեղակալ Գանթարջեանի գումարտակը: Տաք և արիւնահեղ կռիւներով մեր զօրամասերը նահանջեցին և սեպտ. 14–ի առաւօտեան ամրացան Բեգլի–Ահմեդի դիրքերում: Ստիպուած եղաւ նահանջել և կաղզուանի զօրամասը (Յրդ գունդ, գնդ. Շաղուբարեանի) և գրաւել Բեռնայի դիրքերը: Հեռացաւ և կաղզուանի ազգաբնակութիւնը: Համառման կռիւներ տեղի ունեցան և ուրիշ վայրերում, որոնց հետևանքով կարսի ճակատը ստացաւ հետևեալ ընթացքը. Ղարախաչ լեռ—Նոր Սելիմի և Բեգլի Ահմեդի միջև գտնուղ բարձունքը—Բեռնա գիւղ—Աղաջաւա լեռ:

Սեպտ. 23–ին, առանց պատերազմի յայտարարութեան, թիւրքական բանակը դիմեց ընդհանուր յարձակման Հայաստանի դէմ: Սկսւում էր հայ թիւրքական պատերազմը:

Ինչպէս էին արդարացնում թիւրքերն իրենց այդ յարձակումը: Հոկտ. 23–ին Անգորայի կառավարութիւնը հրատարակեց հետևեալ հաղորդագրութիւնը.

«Անատոլուի գործակալութիւնը պարտք է համարում համաշխարհային հանրային կարծիքին տալ հետևեալ լուսաբանութիւնները այն կռիւների մասին, որոնք վերջերս սկսւեցին Կովկասում՝ մխլի ուժերի և հայ դաշնակ հրոսախմբերի միջև:

Հայաստանի Հանրապետութեան կազմութիւնից ի վեր Երևանի կառավարութիւնը նպատակ է դրել բնաջնջելու կամ ստիպելու գաղթել երկրում հաստատուած թուրքերին, որոնք հանրապետութեան ամբողջ ազգաբնակութեան կէսն են կազմում: Ճամաւօրէն ու կանոնաւոր ծրագրով հետապնդուած այս քաղաքականութեան նպատակն է եղել ընդարձակել ազգային հայրենիքը՝ թուրքերի մահով կամ վախուստով թափուր թողնւած տեղերում ներդաղթած հայերի հաստատումով: